Ալեքսանդր Ծատուրյան

Եթիմի սերը

(ժողովրդական մոտիվ)
Ա՛խ, սևաչիկ.
Ջա՛ն հայ աղջիկ,
Սև աչերիդ ես ղուրբան,
Մտի՛կ արա.
Որ իմ յարա
Սրտիս անես մի դարման:

Էշխիդ առած.
Բլբուլ դառած,
Գիշեր-ցերեկ քո սիրուն
Հա՛ երգում եմ.
Հա՛ էրվում եմ,
Աչքիս կտրած անուշ քուն:

Ճամփես քարոտ
Սիրտս յարոտ,
Էս աշխարհում վայնաչար
Քաշ եմ գալիս,
Օրըս լալիս,
Ղարիբ, եթիմ ու անճար:

Ո՛չ հեր ունեմ,

Ո՛չ մեր ունեմ.
Ո՛չ էլ մի տեր, տիրական.
Սրտիս սերը,
Մտքիս տերը
Դո՛ւ ես, ա՛յ իմ սիրական:

Ա՛խ սևաչիկ.
Ջա՛ն հայ աղջիկ,
Սև աչերիդ ես ղուրբան,
Մտի՛կ արա,
Որ իմ յարա
Սրտիս անես մի դարման...

1894 թ. Մոսկվա